



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

20.12.2022թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ազգային անվտանգության ծառայության հարգելի՛ աշխատակիցներ,

շնորհավորում եմ Ձեզ մասնագիտական տոնի կապակցությամբ:

Բարձր եմ գնահատում Ձեր ծառայության դերն ու նշանակությունը մեր երկրի անվտանգության ապահովման, օրենքի և օրինականության պաշտպանության, պահպանության հարցում:

Աշխարհաքաղաքական այս դժվարին իրավիճակում է՛լ ավելի է արժևորվում Ձեր դերակատարությունը և ծառայության յուրաքանչյուր աշխատակցի առաքելությունը՝ ուղղված ազգային անվտանգության և սահմանադրական կարգի պահպանմանը:

Առանձնահատուկ ուզում եմ շնորհավորել նախկին գործընկերներին, քանի որ լինելով ԱԱԾ նախկին աշխատակից՝ բախտ եմ ունեցել ծառայելու իսկական պրոֆեսիոնալների և իրենց հանձնառությանը հավատարիմ նվիրյալների հետ:

Մաղթում եմ ավելի մեծ հաջողություններ, անվտանգ և խաղաղ ծառայություն: Եվս մեկ անգամ շնորհավորում եմ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ